ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Գետամեջ, getamej.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 մայիսի 2017 թվականի N 32-Ա

ՀՈՂԱՄԱՍԸ ԳՈՒՅՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ԲԱԺԱՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի պահանջներով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 32-րդ և 48-րդ կետերի պահանջներով՝ ***որոշում եմ.***

1. Հայկ Գարեգինի Մխիթարյանին սեփականության իրավունքով պատկանող 0,5797 հեկտար բնակելի կառուցապատման հողամասը /անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական N 2742037, կադաստրային ծածկագիր՝ 07-025-0015-0026/ բաժանել 0,32785 հեկտար և 0,25185 հեկտար երկու առանձին գույքային միավորների:
2. 0,32785 հեկտար մակերեսով առանձնացված գույքային միավորին տրամադրել համայնք Գետամեջ 3-րդ փողոց, 3-րդ փակուղի, N1 հասցեն:
3. 0,25185 հեկտար մակերեսով առանձնացված գույքային միավորին տրամադրել համայնք Գետամեջ 3-րդ փողոց, 3-րդ փակուղի, N1/1 հասցեն:
4. Վճարել Գետամեջի գյուղապետարանի 900115112063 հաշվեհամարին՝ 3000 (երեք հազար) դրամ՝ հասցեի տրամադրման ծառայության վճար:
5. Դիմել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Մարզերի միավորված ստորաբաժանում՝ հասցեի պետական գրանցում ստանալու համար:
6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ

2017 թվականի մայիսի 12
գ.Գետամեջ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Գետամեջ, getamej.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 մայիսի 2017 թվականի N 33-Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի ապրիլի 17-ի N 470-Ն որոշման և 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշման կարգի 8-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ կետերով, 13-րդ կետի «ա)» ենթակետով՝ ***որոշում եմ.***

1. Օրինականացնել Հայկ Գարեգինի Մխիթարյանին սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզի Գետամեջ համայնքի 3-րդ փողոցի 3-րդ փակուղու N 1/1-ին հասցեի բնակելի կառուցապատման հողամասում (կադաստրային համար՝ 07-025-0015-0026) 2015 թվականին ինքնակամ կառուցած բնակելի տունը՝ 54,49 քառակուսի մետր ընդհանուր մակերեսով:
2. Սույն որոշման 1-ին կետում նշված շինության պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, շինությունները կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:
3. Հաշվի առնելով, որ սույն որոշման 1-ին կետում նշված 54,49 քառակուսի մետր ընդհանուր մակերեսով ինքնակամ շինությունը կառուցվել է 2001 թվականի մայիսի 15-ից հետո, օրինականացման համար Գետամեջի գյուղապետարանի 900115112063 հաշվեհամարին վճարել 70 840 (յոթանասուն հազար ութ հարյուր քառասուն) դրամ:
4. Սույն որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարը 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ

2017 թվականի մայիսի 12
գ.Գետամեջ